երրորդ 93 ր. 56 կ., չորրորդ 92 ր. 56 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 215 ր. 5 կ., երկրորդ 217 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 86 կ., ոսկի 7 ր. 88 կ. Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ $24^{29}|_{32}$ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ $213^{1}|_{8}$ մարկ, Փարիզի վրա $263^{3}|_{8}$ ֆրանկ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի Ագուլեցի երիտասարդ, որ վաճառականութեան մէջ եղել է, ցանկանում է տեղ ունենալ մասգրիտում որևիցե ապահովելու համար ուշի երաշխաւոր անձինք, պայմանների համար դիմել «Մշակի» խմբագրատունը։

1—8

Թեմական վերատեսուչ Գ. ԲԱԲԻՈՒԻՍ ՐԵԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կուկի, Սիմէ օնովսկայա փողոց, տուն Սարգիս Ալէքսանեանի №-16։

3—4.

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՈԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐՋԱՑՐԱԾ, Հայոց Ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ՌՈՒՍԱՑ լեզուից և ԹՈՒՐԱՆՈՒԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և գաւառներում։ Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ ԷՆՖԻԱՆՋԷԱՆՑԻ ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ։

21—22.

Մի հայ գերդաստան, որը բնակվում է Մայիսոպում, կրում է հայ օրիորդ—խնամցող Հայերէն, Ռուսերէն և Գաղղերէն եզուներ, նոյնպէս և երաժշտութիւն, անական ուսուցչուհի հոյ տեղը ընդունելու, 600 բուբլ տարեկան ռոճիկով։ Ճանապարհի ծախսը առնում է գերդաստանը իւր վրա։ Ցանկացողները՝ իրանց պայմաններով կարող են դիմել նամակով Въ Майкопъ, Куб. обл. Николаю Іосифовичу Алихановъ.

5—10

ԱՆԳԻԱԿԱՆ ԽԱՆՈԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ թեց ուղղակի թէյեզորներից, նոյնպէս ցեցերդ մագնեզիա ծարաւութեան դէմ և կարբոլեան փօշի և էլեղոկ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ։

8—10.

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց։ Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար։ Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան արքեպիսկոպոս, Միքայել Միանսարեանց, Նուբար-փաշա, Կարին քաղաք, Պետերբուրգայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց 'ի Կարին, Սովետ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կաղմ Հայերէն աւետարանին, Նուիրելոց Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց։

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ դնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ։

Տփխիսում ստանալ կարելի է պ. Ղ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում։

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց

Հայոց պատմ թիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի դիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 հատոր, աշխատաս. Ն. Կոստանեանցի։

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար։

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ և յաւելուածներ։

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային գրագէտների համար 10 օրինակից աւել առնողին 10% զեղչումն կը դրուի։

գնելու համար դիմել—Ալէքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին։

Տփխիս—Կենդրոնական գրավաճառանոց։

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մելքոն Փանանցին։

5—10

Վ.Լ.Ա.Դ.Ի.Ա.Վ.Կ.Ա.Ս.Ե.Ա.Ն Օ.Գ.Ի.Ի գործարանի պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվելիցն ծախվել սանձաղալ մաքրված Օ.Գ.Ի.Ն.ԵՐ հետևեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ։ Շիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամէն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն։ Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում։ Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱԳԱՐԶԱԳԻՒ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն։ Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է։ Օղիների պահեստը գտնվում է Մաքայէլեան կամուրջի վրա, ցենտրալնայա հիւրանոցի տակ, Վիսոտինսկու տանը, Վ.օրսնցովի արձանի դիմացը։

5—8 (2 շար.)

ՐԱՀԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրօնսկի կանոնց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Գիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շուեմ բօրսկի վիներական և կաշու հ.։

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.։ Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բասուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.։

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շուեմ բօրսկի վիներական և կաշու հ., Ասատուռծատուրով կանանց հիւանդութիւնների։

Հինգշաբթի. Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Գիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բասուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շուեմ բօրսկի և Ասատուռծատուրով ներքին և կաշու հ.։

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.։

Առաւաւորեայ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ

ՑՈՎՍԷՓ ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐԵԱՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԲԼԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ (Թիֆլիս, Սադովայա փողոց, տուն Տուտունովի, № 34) յայտնում է, որ լաց ցուցիչ և ընդունական քննութիւնները կը սկսվին օգոստոսի 25-ին, իսկ ուսումը սեպտեմբերի 2-ին։

3—4

Ներկայ տարուայ սեպտեմբերի 15-ին Թիֆլիսի հնահանգական դատարանում (Օրլուժոցի Սուզում, լինելու է տորգ (աճուրդ) հանգուցեալ Աբգարեայ Գասանզովի հողերը ծախելու համար, որոնք գտնվում են Բորչալուի Սարալու գիւղում, Շուլաբերի մասում։ Մանրամասնութիւնը կարելի է կարդալ «Кавказъ» լրագրի № 186 տէրութեան յայտարարութեան մասնում։

Մի հայ երիտասարդ կամենում է գործակատար լինել՝ առհասարակ մանուֆակտուրնի մագազինում։ Ցանկացողը իրենց հասցէն կարող են թողնել «Մշակի» խմբագրատունը։

2—5

ՖՐԱՆՍԻՈՒՀԻ քոյրեր ընդունում են ՕՐՈՐՆԵՐԻՆ ժամ 9—1 ՖՐԱՆՍԱԲԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուների և ԵՐԱԺՇՏՈՒԹԵՆ դասեր տալու համար։ Սօլոլակի, տուն ՕՐՆԵԼՈՒ № 14։

2—3 (5)

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻ ՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԼԿՆԵՐ, որտեղ կը լինի տասնալ ԿԱՖԷ, ՇՈՒՕԼԱԴ, ԹԷ և պատրաստված հանքային զանազան ջրեր։

39—40

Ընդունում եմ ամէն տեսակ պատուիրանք ԿՕՆՏԵԼԿՆԵՐԻ, ՊԵՐՕՄՏՆԻ, ՍՈՒՈՒԼԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԽՏՈՎԿՕՆՏԵԼԿՆԵՐԻ, և ամէն տեսակ կոնդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով։ Պատուիրները կը կատարվին ամէն ճշտութեամբ, և խղճմտանքի ցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХЕЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦЕ МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ։ փոստային կոնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

3—50

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Ղ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մարգիսեանի հետևեալ դասագրքերը.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) 75
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) 90
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) 65

Дозволено цензурою Тифлисъ, 5 Сентября 1880 г. Տպարան Դաւթեանց եղբայրների Типографія братьевъ Давидовыхъ